BLACKBERRY **CLIENT** ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Սույն պատվիրատուի ծրագիրը («**Client**») ներկայացված է BlackBerry Limited-ի կամ նրա դուստր ձեռնարկության կամ մասնաճյուղի կողմից («**BLACKBERRY**») և նախատեսված է բացառապես ձեռնարկության սերվերային ծրագրի և ծառայության («**Server Software**») հետ համատեղ օգտագործման համար, որը Client-ի և Կառավարվող Ծրագրերի հետ միասին,ինչպես ներկայացված է ստորև, (միասին՝ «**Client Software**») այսուհետ կանվանվի «**Solution**»:

Ցանկացած Client Software տեղադրելու, ակտիվացնելու կամ օգտագործելու համար Դուք պետք է կա՛մ (ա) (i) Ձեր անունից BLACKBERRY-ի հետ կնքեք BlackBerry Solution-ի լիցենզիայի պայմանագիր Solution-ի համար, ներառյալ ցանկացած փոփոխություն և լրացուցիչ պայմաններ, որոնք վերաբերում են Solution-ին («**BBSLA**») և (ii) եթե անհրաժեշտ է Solution-ի համար, ձեռք բերեք և վճարումներ կատարեք, եթե այդպիսիք առկա են, Սպառողի մուտքի լիցենզիայի (Client Access License) համար՝ Ձեր սարքում Client Software-ի տեղադրման, ակտիվացման և օգտագործման համար, կա՛մ (բ) թույլտվություն ստանաք տեղադրելու, ակտիվացնելու և օգտագործելու Client Software-ը Ձեր գործատուի կամ այլ իրավաբանական անձի անունից («**Լիցենզավորված անձ**»), որը՝ (i) ձեռք է բերել BBSLA, (ii) տեղեկացրել է Ձեզ Client Software-ի օգտագործման կանոնների մասին՝ BBSLA-8 համաձայն, (iii) համաձայնել է պատասխանատվություն կրել Ձեր կողմից Client Software-ի օգտագործման համար և (iv) եթե պահանջվում է Ձեր լիցենզավորված անձի Solution-ի համար, ձեռք է բերել և վճարումներ կատարել, եթե այդպիսիք առկա են, Սպառողի մուտքի լիցենզիայի համար՝ Ձեր սարքում նման Client Software-ի տեղադրման, ակտիվացման և օգտագործման համար:

Ձեր կազմակերպությունը կարող է օգտագործել Solution-ը Բջջային Հավելվածի Կառավարում (Mobile Application Management - «**MAM**») իրականացնելու համար՝ Ձեզ համար հասանելի դարձնելով այն հավելվածները, որոնք նախատեսված են աշխատեցվելու անձնական կամ աշխատանքային հատվածում կամ Ձեր սարքի աշխատանքային տարածքի մասնահատվածում («**Managed Applications**»)՝ ներառյալ երրորդ անձի կողմից տրամադրված հավելվածները: Այսպիսի հավելվածները համարվում են Երրորդ կողմի ծրագիր (Third Party Software)՝ համաձայն BBSLA-ի: Երրորդ կողմի ծրագիրը կարող է ներառել լրացուցիչ պայմաններ Ձեր կամ Ձեր Լիցենզավորված անձի և դրա օգտագործումը

հսկող Երրորդ կողմի ծրագիր մատակարարողի միջև: BLACKBERRY-ը պատասխանատվություն չի կրում Երրորդ կողմի ծրագրի համար, և վերջինիս վերաբերյալ բոլոր հարցերը և մտահոգությունները պետք է ուղղվեն Երրորդ կողմի ծրագրի մատակարարողին:

Ձեր կազմակերպությունը կարող է օգտագործել Solution-ը Ձեր սարքում Բջջային Սարքի Կառավարման (Mobile Device Management - «**MDM**») գործառույթներն իրականացնելու համար՝ ներառյալ անձնական տեղեկատվության հավաքագրումը: Ձեր կազմակերպությունը պատասխանատու է Solution-ի միջոցով հավաքագրված ողջ տեղեկատվության հավաքագրման, մշակման, օգտագործման և կառավարման համար:

Ի լրումն վերոհիշյալ պայմանների, եթե Դուք ձեռք բերեք որևէ Client Software Apple-ի iTunes App Store-ից, Դուք ընդունում և համաձայնվում եք Լիցենզավորված անձի անունից, ով լիազորել է Ձեզ տեղադրել, ակտիվացնել և օգտագործել Client Software-ը, կամ եթե չեք լիազորվել, ապա ընդունում և համաձայնվում եք ինքներդ Ձեր անունից, որ (i)Apple-ը ոչ մի պատասխանատվություն չի կրում նման Client Software-ի համար, ներառյալ, բայց չսահմանափակվելով դրա կատարողականությամբ, սպասարկմամբ և աջակցությամբ կամ ցանկացած երրորդ կողմից ներկայացված պահանջի համար, որ այդ Client Software-ը խախտել է երրորդ կողմի հեղինակային իրավունքները: Եթե Client Software-ը չկարողանա համապատասխանել ցանկացած կիրառելի երաշխիքներին, Դուք կարող եք տեղյակ պահել Apple-ին և Apple-ը կփոխհատուցի այդ Client Software-ի գնման արժեքը, եթե այդպիսին կա, և, գործող օրենքով թույլատրված առավելագույն չափով, Apple-ը չունի ոչ մի երաշխիքային պարտավորություն Client Software-ի հետ կապված: Նաև(ii)Apple-ը և նրա դուստր ձեռնարկությունները համարվում են այս լիցենզիայի պայմանագրի երրորդ կողմի շահառուներ և իրավունք ունեն (և համարվում են այդ իրավունքը ընդունած) կիրառելու այս օգտագործողի լիցենզիայի պայմանագիրը, որպես երրորդ կողմի շահառու:

ՆՇԵԼՈՎ «ԵՍ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ» ԿՈՃԱԿԸ ՆԵՐՔԵՎՈՒՄ, ԿԱՄ ՏԵՂԱԴՐԵԼՈՎ, ԱԿՏԻՎԱՑՆԵԼՈՎ ԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՎ CLIENT SOFTWARE-Ի՝ ՈՐԵՎԷ ՄԵԿԸ, ԴՈՒՔ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՔ, ՈՐ ԿԱՐԴԱՑԵԼ ԵՔ, ՀԱՍԿԱՑԵԼ և ՀԱՄԱՁԱՅՆ ԵՔ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼ ՀԱՄԱՁԱՅՆ ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ և ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ BLACKBERRY-ԻՆ, ՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ (ա) ԿԱՄ (բ) ՎԵՐՈՆՇՅԱԼՆԵՐԸ ԲԱՎԱՐԱՐՎԱԾ ԵՆ: **ԵԹԵ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԵՔՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ԿԱՄ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԵՔ ՎԵՐՈՆՇՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ և ՈՉ ՄԵԿԻՆ, ԴՈՒՔ ՉԵՔ ԿԱՐՈՂ ՏԵՂԱԴՐԵԼ, ԱԿՏԻՎԱՑՆԵԼ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ CLIENT SOFTWARE-Ը:**